



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Жицумп м Sh  
бүрэг.



1903



ՀԱՅԱՐ  
ՈՒ ՄԻ ԽԱՂ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՅԻՍՆԵԱԿ

Խմբագրեցին

ԿՊՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆ

891.99
2-14

Խառապություն

Օրոռոյ Ա. Էջմիածնի

1903

1-99

-14 մը

ԵՊԸ 20 6 NOV 20

# ՀԱԶԱՐ ՈՒՄԻ ԽԱՂ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՅԻՍՆԵԱԿ

Խմբագրեցին

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆ

302-50 Վարդապետ


Տաղավար Մայր Արքույ Ա. Էջմիածնի

Տաղավար Ա. Բիբանյան

ՀԱՅ-ССР

Խ. Տ. Պաշուկին  
ՀԵՎԱԿԱՆ ԽՈՎԱԿԱՆ

1903



18. V. 05. 2013

ԲԱՐԵՎԱՐԱ ԴԱՎԻ

ՀՈՎՈՎԸ ՄԱԿՐԱՎՈՒՅՆ

ԱԼԱՎՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ

Дозв. ценз. 2-июня 1903 г. г. Тифлисъ.

ՀԱՅԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՅԻՍՆԵԱԿ

Հայոց առ անշատ այ ծառի առ այսու<sup>1</sup>  
առ անշատ պարզ բանական բանական Ա  
ոգարան ոգարան զի զ Ա  
ոգարան զայց Նի համա

ոգարան ինչ անչ դեպա ոգարան ինչ  
ոգարան Անուշաց մէջ պարզ Ան  
Անուշաց մէջ ինչ դեպա

Հնկ արէք, սարէք ջան, հնկ արէք,  
Իմ դարդին դարման արէք:—  
Սարէքը հնկ չեն անում,  
Իմ դարդին դարման անում:

Ամպէք, ամպէք, մի քիչ զնկ արէք,  
Վաշար անձրև թափէք, ծնկ արէք,  
Դէչ մարդու օր-արեք  
Սև հողի տակով արէք:

Հնկ արէք, ամպէք ջան, հնկ արէք,  
Իմ դարդին դարման արէք:—  
Ամպէքը հնկ չեն անում,  
Իմ դարդին դարման անում:

Սարեր, ձորեր, դաշտեր ու ջլրեր,  
Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրներ,  
Մի վեր կացէք, իմացէք,  
Տեսէք իմ սըրտի ցաւեր:

Հնկ արէք, սարեր ջան, հնկ արէք,  
Իմ դարդին դարման արէք:—  
Սարերը հով չեն անում,  
Իմ դարդին դարման անում:

## 2

Սիրտը նըման էր էն փըլած տըներ,—  
Կոտրեր էր գերաններ, խախտեր էր  
սըներ.  
Պիտի էնոր մէջ բընակեն էն դարնան  
հաւքեր.  
Երթամ ձի թալեմ էն դարնան գետեր.  
Բնիմ ձըկան ձագերացըն կեր:  
Այ, սօ լա՞ն տընաւեր,

Սև ծով մեմ տեսե, սիպտակն էր  
բոլոր.

Սլին կըզարնէր, չէր խառնի յիրոր.  
Ո՞րն էր տեսե՝ մէկ ծովն երկու թաւ-  
ւոր, —  
Ղարիբի սիրտն է պըզտոր ու մոլոր:  
Աստուած սիրէք՝ մի ըլնիք սըրտիկ  
սեաւոր:

## 3

Էս օր ուրբաթէ, պաս է.  
Դէ՛, նէ՛, զը՛նզը, զը՛նզը, դէ՛, նէ՛, զա՞ն.  
Սըրտիկ արծաթէ թաս է:  
Դէ՛, նէ՛, զը՛նզը, զը՛նզը, դէ՛, նէ՛, զա՞ն.  
Սը՛րտիկ, մալուլ մի մընա, —  
Աշխարհ մարդու չի մընա:

Աշունն եկաւ ցողալէն,  
Ծառի թըփեր դողալէն:  
Սը՛րտիկ, մալուլ մի մընա, —  
Աշխարհ մարդու չի մընա:

Աը՛րտիկ, մալուլ մի մընա, —  
Աշխարհ մարդու չի մընա:

Ելել եմ ու ճար չունիմ,  
Մեռնելու հընար չունիմ:  
Աը՛րտիկ, մալուլ մի մընա, —  
Աշխարհ մարդու չի մընա:

## 4

Լուսնակն անուշ, հովս անուշ,  
Վա՞յ, լէ, լէ, լէ, լէ,  
Վա՞յ, լօ, լօ, լօ, լօ.  
Եինականի քունն անուշ:  
Երնեկ են օրեր,  
Որ կելնեն սարեր:

Ծագեց լուսնակ երկընուց,  
Հովըւի փողն էր անուշ:  
Հօտաղն եղներ կարածայ,  
Մաճկալ պառկեր՝ քունն անուշ:  
Ջըղղղուն քամին կը փըչէ,  
Ծովային հովս էր անուշ:

Դաշտեր, ձորեր մընջեր են,  
Ջըրեր դըլդլան՝ ձէնն անուշ:

Հաւքեր թառան իրենց բուն,  
Բըլբուլի տաղն էր անուշ:

Անմահական հոտ բուրէր,  
Քաֆուր վարդի հոտն անուշ:

## 5

Զիգ տու, քաշի, այ եղը,  
Ա'րա, հօ', հօ', ա'րա, հօ'.  
Լուծըդ մաշի, այ եղը,  
Ա'րա, հօ', հօ', ա'րա, հօ'.  
Աստուած պահէ քու տէրը,  
Ա'րա, հօ', հօ', ա'րա, հօ'.

Մինն էլ տաշի, այ եղը:  
Ա'րա, հօ', հօ', ա'րա, հօ':

Մեր գութանը օդած ա,  
Եղանց ուսը նօթած ա,  
Վարէ վարը, այ գութան,  
Հաղիւ խովը զօդած ա:

Եղագարն ընկաւ ծըմակին,  
Աստուած կը տայ մըշակին.  
Սուր գութանը ծիր գընաց,  
Տէր-մըշակը քամակին։

Սերմէ, սերմէ, այ մըշակ,  
Սնւրբ ա, սնւրբ ա քու փեշակ.  
Մինը հազար տուր, Աստուած,  
Քեզ ձէն կը տան տէր-մըշակ։

## 6

Գութանը հաց եմ բերում,  
Բերանը բաց եմ բերում.  
Տես, քեզ արքան՝ եմ սիրում,  
Չուկը տապկած եմ բերում։

Ես օր գութանը մերն ա,  
Մաճ բընողը իմ հէրն ա.  
Եզնարած շէկլիկ տըղէն՝  
Աշխարհ գիտէ՝ իմ տէրն ա։

Վեր կացած հաւախօսին՝  
Գութանն ա վարում փոսին։

Բարկ արել երկընկում  
Շողն ա դիպել ակօսին։

Հմւրեր, թեւանի արէք,  
Եարիս հովանի արէք.  
Թաղ բարակ քամին փըչէ,  
Հետն էլ դուք նանի արէք։

## 7

Արազը հեշտացել ա,  
Եա՞ր.

Ճամբէքը կոշտացել ա,  
Եա՞ր.

Խաբար տարէք իմ եարին,  
Եա՞ր.

Առաջը շատացել ա,  
Եա՞ր։

Իմ սէրը սուր ա դառել,  
Կըրակ ու ջուր ա դառել.  
Եար, քեզ սըրտով սիրելը  
Ինձ թուք ու մուր ա դառել.

Էլի դալն եմ իմացել,  
Աչքըս ճամբիդ մընացել.  
Քեզ համար գիշեր, յերեկ  
Միտք անելով եմ կացել:

Բաղդը զարկեց սըրտիս նետ,  
Արտասուլքս եղաւ դետ.  
Թէ Աստուածըդ կը սիրես,  
Եար, ինձ արի, տար քեզ հետ:

## 8

Զինար ես, կեռանալ մի,  
Եա՛ր, եա՛ր.  
Մեր գըռնէն հեռանալ մի,  
Եա՛ր, եար.  
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ,  
նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ.  
Եար, քո Աստուած կը սիրես,  
Եա՛ր, եա՛ր.  
Հեռու ես, մոռանալ մի:  
Եա՛ր, եա՛ր,  
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ,  
նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ:

Զեր բաղի գուռը բաց ա,  
Ոտներըս շաղով թաց ա.  
Ինձանից հեռացել ես,  
Աչքերըս լիքը լաց ա:

Էս գիշեր երազ տեսայ,  
Հերկերըս վալած տեսայ.  
Ամօթ քեզի, այ տըզայ,  
Թու եարը տարած տեսայ:

## 9

Կուժն առայ, ելայ սարը,  
Զըդըտայ ֆիդան եարը.  
Ֆիդան եարը ինձ տըւէք,  
Զըդաշեմ ահ ու զարը:

Մեծ սարի հովին մեռնեմ.  
Շէկ տըզի բոյին մեռնեմ.  
Մի տարի ա չեմ տեսել, —  
Տեսնողի աչքին մեռնեմ:

Բլլըուլը դարի վերայ.  
Խընձորը ծառի վերայ.

Սիրած սիրածի տային,  
Չոր գետնին՝ քարի վերայ:

## 10

Երկինքըն ամպել է,  
Ի՞նչ անուշ թոն է.  
Գամ դըռնէն անցնեմ  
Հոգեակըս հոն է:

Երկինքըն ամպել է,  
Գետինը թաց է. •  
Եարըս քընել է,  
Երեսը բաց է.

Երկինքըն ամպել է,  
Ի՞նչ անուշ երակ.  
Սըրտիս մէջ լըցաւ  
Մ' բուռը կըրակ:

Երկինքըն ամպել է,  
Գետին շաղերով.  
Ես քեզ սիրել եմ  
Անուշ խաղերով:

Երկինքըն ամպել է,  
Գետինը մութ է.  
Ես քեզ ուղել եմ,  
Թո՞ղ ասեն՝ սուտ է:

Շորճը դու, մէկիկ եար,  
Տեսնեմ՝ դու ումն ես.  
Իրաւ եմ ասում՝  
Դու իմ սըրտումն ես:

## 11

Ալագեաղ սարն ամպել ա,  
Վա՛յ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ.  
Աղբէր իր ձին թամբել ա:  
Իմ մայրիկ ջան, իմ մայրիկ ջան:

Աղբէր իր ձին թամբել ա,  
Եարոջ դըռնէն անցել ա:

Եարոջ դըռնէն անցել ա,  
Ելե դաշդը՝ խաղցել ա:  
Ելե դաշտը՝ խաղցել ա,  
Անձրե եկե, թըռջել ա:

Անձրեւ եկե, թըռչել ա,  
Աշեւ զարկե՞ չորցել ա:  
Արեւ զարկե՞ չորցել ա,  
Քան կարմիր վարդ բացել ա:

## 12

Մեր դըռանը խընկի ծառ,  
Գիւլում ջան,  
Զեր դըռանը խընկի ծառ,  
Գիւլում ջան.  
Խընկենին ա բերել բար,  
Գիւլում ջան,  
Իմ պըղտիկ, խորոտիկ եար,  
Գիւլում ջան:

Մեր դըռանը խընկի ծառ,  
Նախշուն բըլբու վըրէն թառ,  
Երթար ու գար, շորոր տար,  
Սիրուն եարին օրօր տար:

Մեր դըռանը խընկի ծառ,  
Մարջան բըլբու վըրէն թառ.


Դընար ու գար, շըւին տար,  
Սնուշ եարի թեկին տար:

Մեր դըռանը խընկի ծառ,  
Ոսկի բըլբու վըրէն թառ.  
Կարմիր խընձոր անել տար,  
Ալուան ծաղիկ տանել տար:

## 13

Անձրեն եկաւ շաղալէն,  
Ուռու տերեւ գողալէն.  
Վայ, լի, լի, լի, լի, լի,  
լի, լի, լի, լի, լի.  
Հըրէս եկաւ իմ աղբէր,  
Ալ ձին տակին խաղալէն:  
Վայ, լի, լի, լի, լի, լի,  
լի, լի, լի, լի, լի:

Դէմ աղօթրան խաչ անեմ,  
Թընամու դէմ չանչ անեմ.  
Զեռըս գըցեմ վրգովր,  
Մի երեսը աղօթրան մահման մասը:



Խալիչքը փըռել եմ,  
Նախշուն բարձեր դըռել եմ.  
Թառլան ջան, քեզ ուտելու  
Սեր, կարագ հաղըրել եմ:

Տապկած հաւի ճուտ բերեմ,  
Ոչխարի մածուն մերեմ.  
Որ դիտենաս, անուշ ջան,  
Թէ քեզ սըրտով կը սիրեմ:

— Դուշ մի դառնա թեաւոր.  
Դու խաղ կանչի ձեաւոր.  
Եարաբ կընի էն օրը,  
Որ դաս մեր տուն թագաւոր:

Պարտէղ ունիմ դըրախտ ա,  
Ծաղիկ ծաղկունքի վախտ ա.  
Գէշ աղջիկ, սիրուն տըղայ,—  
Էս էլ մի ուրիշ բախտ ա:

Ոսկէ մատնիք մատներիս,  
Շոքըն ընկաւ երեսիս.

Ս.քոր, շուտով մի կանչի,  
Անքուն կանես իմ եարիս:

Սիրտը արնով լըցեցիր,  
Կըրակով խորովեցիր.  
Աչըլդ դուս դայ, այ աըլոր,  
Ի՞նչ շուտ ձէնըդ դըցեցիր:

Արև թըռվըռով ելաւ,  
Իմ չինարի եարը,  
Սեր բանը կըռուով ելաւ,  
Դարդիման եարը.

Թընամու սրդին մեռնի,  
Իմ չինարի եարը,  
Իրա չար սըրտով ելաւ:  
Դարդիման եարը:

Իմ չինարի եարը,  
Իմ չինարի եարը,  
Իմ չինարի եարը,  
Գովական եարը:

Ճըրագը վառայ, վառայ,  
Հօր հետ վատամարդ դառայ:

Մէր ու աղբէր թող տըւի,  
Ես իմ սիրածին առայ,

Քարափի ծէրին կանչի,  
Թող թըշնամին ամանչի.  
Արելու մեռնեմ, եալ ջան,  
Չինարի պէս կանանչի:

## 16

Կայնել ես, կանչում էլ չես,  
Նա՛ր,  
Բոյէդ ամանչում էլ չես,  
Նա՛ր.

Նար, նայ, նայ, նայ, նայ,  
նայ, նայ, նայ, նայ, նայ,  
Եկար կըշտովս անց կացար,  
Նա՛ր,  
Տէր ես, ճանանչում էլ չես:  
Նա՛ր:

Նար, նայ, նայ, նայ, նայ, նայ,  
նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ:  
Սև ամպը սարի գլխին,  
Կաքաւը քարի գըլխին:

Զէ իրար խօսք ենք տըւել  
Են բարձըր դարի գըլխին:

Գընա, գընա, հետիդ եմ,  
Կարմիր խընձօր դօտիդ եմ.  
Դու ինձ էստեղ չես թողնի,  
Ուտեղ երթաս մօտիդ եմ:

## 17

Սա՛ր, սա՛ր,  
Ես սարերի ծաղիկն եմ.  
Զա՛ն, զա՛ն.  
Ես լեռնի քուրիկն եմ:

Ժամի դըռնէն դուս ելայ.  
Արեի պէս լուս ելայ:

Էն սարին սար չեմ ասի,  
Փիս գեադին եար չեմ ասի:  
Ինձ չէր առնում թող չառնէր.  
Խօսք ու զըրիցն էլ ի՞նչ էր:  
Հաց եմ թըլսել փըրփըռի,

Վատ խօսովը քըրքըրի:  
Ես սարերի ծաղիկն եմ.  
Ես կեռնի քուրիկն եմ:

18

Մատնիքը մատովը չէր,  
Ո՞յս.  
Սիրածը սըրտովը չէր:  
Ո՞յս.  
Վայ, լի, լի, լի, լի, լի, լի,  
Վայ, լի, լի, լի, լի:  
Դերձիկ, մատներդդ կոտրի,  
Մինթանէն բոյովը չէր:  
Զարդեար թևերդդ կոտրի,  
Քամարը մէջքովը չէր:

Սիրածի հէրը մեռնի,  
Սիրածը սըրտովը չէր:

19  
Այս կանեմ, արուն կու գայ.  
Սև սըրտիս գարնեն կու գայ,  
Կորուցել եմ իմ եարը,  
Ով գիտէր երբ տուն կու գայ:

Արել գիպաւ պատին, սձնան  
Ոչ ողորմի իմ տատին.  
Ես լէն արձակ աշխարհը—  
Ինձի արւաւ աղքատին:

Սարերին գալուն կու գայ.  
Սև սըրտիս արուն կու գայ.  
Ի՞նչ անեմ այնպէս եարը,—  
Պըտըտուի տարուն կու գայ:

20

Սարերի վըրով գընաց,  
Եա՞ր, եա՞ր.  
Արօսով, արօսով,  
Եարիս կարօսով.

իմ եարը իլուսվ գընաց.  
Եա՛ր, եա՛ր.

Մընացիր, մընացիր,  
Սալդաք զընացիր:

Ոչ լոր ելաւ, ոչ կաքաւ,  
Եա՛ր, եա՛ր.

Արօտվ, արօտվ,  
Եարիս կարօտվ,

Զեռնէս թըռնելով գընաց:  
Եա՛ր, եա՛ր.

Մընացիր, մընացիր,  
Սալդաք զընացիր:

Ծաղիկ էր հոտով-մոտով,  
Եկաւ, անցաւ իմ մօտով.  
Աչքը տեսաւ՝ սիրեցի,  
Ու մընացի կարօտով:

Շէկ եարիս դըրի ճամբան,  
Ափսոս, չասի իրան բան.  
Ճամբին օդնական չունի, —  
Սուրը կարապետ պահապան:

Էս գիշեր լուսը տեսայ,  
Երի, երի, երի, ջան.

Իմ եարը դուսը տեսայ.  
Երի, մարալօ' ջեյրան.

Ելել էր աւխտ էր գալի,  
Երի, երի, երի, ջան.

Հրացանը ուսը տեսայ:  
Երի, մարալօ' ջեյրան:

Արե էր ամպի տակին,  
Սուրը Յակոր ճամբի տակին.

Մի էնակէս աղբէր ունեմ,  
Հրեղէն ձին թամբի տակին:

Արել սարի վերայ,  
Մամուսը քարի վերայ.

Էս ոսկի սարք պիտէի,  
Իմ սիրած եարի վերայ:

Հէն, սարէն մարդ ա դալի,  
Սարը կըրակ ա տալի.

Առաջը աղլուխ բացաւ,  
Իմացայ վարդ ա տալի:

**Լուսնակը սարի տակին,**  
Եա՛ր, եա՛ր.  
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ,  
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ.  
**Մամուռը քարի տակին,**  
Եա՛ր.  
Եա՛ր, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛,  
Եա՛ր, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ.  
**Ես իմ եաբին կարօտ եմ,**  
Եա՛ր, եա՛ր.  
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ,  
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ.  
**Քան վարդ ու մանուշակին,**  
Եա՛ր.  
Վա՛յ, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛,  
Վա՛յ, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛:

**Աչքը դըցել եմ սարին,**  
Ոտքը տըւել լիո քարին.  
Երթայ ու էլ եղ չը դայ,  
Քեզ սալդաթ դըրած տարին:

Կանգնեմ քարին ու սարին,  
Դիր գըրեմ զարիբ եարին.  
Արցունքով գըրեմ, կանչեմ,—  
Աղու կըտրի սէնց տարին:

Սի՛րուն ջան, սի՛րուն ջան,  
Սի՛րուն ջան, սիրտը մի՛ բանա.  
Նըշանած սալդար եմ,  
Ես չե՛մ դիմանայ:

Սի՛րուն ջան, սի՛րուն ջան,  
Ծաղիկ ունիմ ալայ ա:  
Ալայ չի՝ ալ-վալայ ա.  
Հեռու տեղ մի եար ունիմ  
Նըռան հատիկ, լալայ ա:

Սի՛րուն ջան, եւ այլն:

Սի՛րուն ջան, սի՛րուն ջան,  
Ես գիշեր ես գուս ելայ,  
Թաթախ կընիկ թացել ա.  
Կը կաթէր մարմար քարին,  
Եարիս աչքն ա՝ լացել ա:  
Սի՛րուն ջան, եւ այլն:

Սի՞րուն ջան, սի՞րուն ջան,  
Լուսնակը բակ ա գլցել,  
Քեզ ամպի տակ ա գլցել.  
Իմ կուրացած բախտըն էլ  
Ինձի մենակ ա գլցել:  
Սի՞րուն ջան, եւ այն:

Սի՞րուն ջան, սի՞րուն ջան,  
Ամպել ա կամար կամար,  
Կապել ես ոսկէ քամար.  
Դու ուրիշ միտք մի անի,  
Մի ջան ունիմ իր համար:  
Սի՞րուն ջան, եւ այն:

## 24

Լուսնակն ա կայնել դարին,  
Եա՛ր, աման,  
Ա'ղջի, դու սիրուն,  
Ջա'նե, ջա'ն.  
Երնակ քու սիրուն.  
Պատկերն ա քու պատկերին.  
Եա՛ր, աման,  
Ա'ղջի, քու քելքը,

Ջա'նե, ջա'ն.

Տարաւ իմ խելքը:

Լուսնակ ջան, շուտ մի երթայ,  
Եա՛ր, աման,  
Ա'ղջի, դու սիրուն,  
Ջա'նե, ջա'ն.  
Երնակ քու սիրուն.

Զուր մէկէէլ դալող տարին:  
Եա՛ր, աման,  
Ա'ղջի, քու քելքը,  
Ջա'նե, ջա'ն.  
Տարաւ իմ խելքը:

Լուսնակը ցօլաց, գլնաց.  
Դէմ առաւ ամպին՝ մընաց.  
Սըրտով պայման չը տըւաւ,  
Սըրտիս դաղ ելաւ, մընաց:

Լուսնակը պահ ա մըտել,  
Սնուշ եարը չեմ դըտել.  
Աչըրս արցունքով լըցուած  
Գիշերը քուն եմ մըտել.  
Քեզ երազումը դըտել.

Քեզանից ձեռ չեմ վերցնի,  
Քանի սաղ եմ, չեմ փլտել:

25

Ա'խ, մա՛րալ ջան,  
Կոկոնըս թոռմած մընաց,  
Ջա՞ն, գեա՛րալ ջան.  
Սիրտըս կըրակած մընաց.  
Ա'խ, մա՛րալ ջան.  
Ի՞նչ անեմ իմ ապրելը,  
Ջա՞ն, գեա՛րալ ջան.  
Իմ աչքերըս թաց մընաց:

Կամար ունքըդ դովեցիր,  
Սիրել էիր ատեցիր.  
Ինձ պէս ուժով կըրտըճին  
Դու անդանակ մորթեցիր:

Ջահիլ եմ, ընկեր չունիմ,  
Ընկել եմ ես, տէր չունիմ.  
Ոչ լաւ ասէք, ոչ էլ վատ,—  
Հարըստութեան սէր չունիմ:

26

Եա՛ր.

Ա'յ, հեւա, հեւա սիրտըս,  
Վա՞յ, եա՛ր, լէ՛.  
Ճընճըղկան թև ա սիրտըս.  
Եա՛ր.  
Քան պուտը կարմիր չը կայ,—  
Վա՞յ, եա՛ր, լէ՛.  
Բաց անեմ սե ա սիրտըս:

Պարտէղ եմ չափար չունիմ,  
Եսկ կըտրիճ եմ եար չունիմ.  
Գընաց ձեռնէս իմ կեանքը,—  
Ջահիլ եմ խաբար չունիմ:

Ուոի ծառին բար չի՞նի,  
Տակը քար ա, վար չի՞նի.  
Էս Աստուածն ու երկինքը  
Սիրատէրին ճար չի՞նի:

Հօյ եար, հօյ եար,  
Ա'զիզ եար զան, դուռը բաց.  
Հօյ եար, հօյ եար,  
Ոսները ցրտուն զընաց,  
Ոսները, ոսները ցրտուն զընաց:

Հօյ եար, հօյ եար,  
Պաղ ես ձըմեռուայ սառից,  
Այուր ես դու լեռ քարից.  
Եռեէդ ինձ քաշ տալով,  
Տարար գըցեցիր սարից:  
Հօյ եար, եւ ալն:

Հօյ եար, հօյ եար,  
Զիւն ա գալի վերհից,  
Զուր ա կաթում տերհից.  
Իմ պարզ օրըս ամպել ա  
Անբախտ եարի երեսից:  
Հօյ եար, եւ ալն:

Հօյ եար, հօյ եար,  
Ճերմակեց գետին ձընից,  
Ա'զի, դուրս արի տընից.

Չեռովը էրուած ոըրտիս  
Կամ դեղ արա, կամ ջնոր լից:  
Հօյ եար, եւ ալն,

<sup>հան</sup> կ դիշեր, լուսնակ դիշեր,  
Վայ, լի, լի, լի, լի, լի,  
լի, լի, լի, լի, լի.  
Զիւնն եկեր, գետին նախշեր.  
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ.  
Ով մոռանայ՝ երկու աչեով կուրանայ.  
Աչըլդ դէմ արա՝ պաշեմ,  
Վայ, լի, լի, լի, լի, լի,  
լի, լի, լի, լի, լի.  
Կեռ ունքեր, կարմիր թըշեր:  
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ.  
Ով մոռանայ՝ երկու աչեով կուրանայ:

Այ դիշեր, դարձիր տարի,  
Հացըս թող լինի գարի.  
Մեռակ եարըս ինձ համար  
Սըրտով խօսքը կատարի:

Ա՛ղջի, քու չարը տանեմ,  
Քու սիրուդ ինձ կը սպանեմ.  
Դու իմ խօսքին ականջ դիր,  
Ես մօրըդ հաւան կանեմ:

29

Կայնել ես վարդի հովին,  
Վարդի հովին, հովին.  
Քամին տայ կըրծքիդ մովին,  
Կըրծքիդ մովին, կըրծքիդ մովին.  
Երեսիդ շողին մեռնեմ,  
Շողին մեռնեմ, մեռնեմ.  
Աչքերիդ կապուտ ծովին:  
Կապուտ ծովին, կապուտ ծովին.

Իրար հետ ծաղիկ քաղենք,  
Ծաղիկ բաղենք, բաղենք,  
Թըշնամու սիրուդ դաղենք.  
Սիրուդ դաղենք, սիրուդ.  
Մէկու խօսքէ չելնենք,  
Խօսքէ չելնենք, չելնենք,  
Աշխարհքում քանի սաղ ենք:  
Քանի սաղ ենք, բանի սաղ ենք:

30

Ոռնեմ, երբամ են սարը,  
Առնեմ, երբամ են սարը,  
Առնեմ, երբամ են սարը,  
Սկը անելով իմ եարը:

Վըրան եմ զարկել դարին,  
Պայման եմ դըրել տարին.  
Տարին թող գայ, լըրանայ,  
Հետը բերէ իր բարին:  
Առնեմ, երբամ եւ ալն:

Հէնց որ ծաղկի արել,  
Բեղի դըրկեմ բարել.  
Իմանամ դու իմ եարն ես,  
Առնեմ, ենեմ վերել:  
Առնեմ, երբամ եւ ալն:

Քարի տակին պաղ աղբեւր,  
Աղծաթի թաս, ոսկի ջուր.  
Ես կը վառիմ քո սիրուն,  
Մի թաս ուղեմ, երկուս տուր:  
Առնեմ, երբամ եւ ալն:

Հօ՛յ, Նա'զան իմ, Նա'զան իմ,  
Զա՛ն, Նա'զան իմ, Նա'զան իմ.  
Նա'զան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Խոր խոր ձորերով եկար.  
Նա'զան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Խոր խոր ձորերով եկար:

Դարնան սիրուն ծաղիկ եռ,  
Հօ՛յ, Նա'զան իմ, Նա'զան իմ,  
Ինձ համար աղունիկ եռ.  
Զա՛ն, Նա'զան իմ, Նա'զան իմ.  
Դըլիսիս վըրով պըտիտ ասուր,  
Հօ՛յ, Նա'զան իմ, Նա'զան իմ,  
Նախշուն-թև թիթեռնիկ եռ:  
Զա՛ն, Նա'զան իմ, Նա'զան իմ:  
Եա'r ջան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Խոր խոր ձորերով եկար.  
Եա'r ջան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Խոր խոր ձորերով եկար:

Ճամբան տլւէք, առաջ գամ,  
Սիրած եարիս՝ բարկ տպմ.  
Ուխտ եմ արել, որ առնեմ,  
Թող տեսնի աշխարհ ալամ:  
Հօ՛յ, Նա'զան իմ, եւ այլն:  
  
Սարեր, Ճամբան յետ գացէք,  
Իմ եարի ճամբէն բացէք.  
Եար եարի հետ խօսելիս  
Ականջ արէք, իմացէք:  
Հօ՛յ, Նա'զան իմ, եւալն:

Նըշի ծառին նոռշ կըլնի,  
Վարդի հոտն անոռշ կըլնի.  
Երանեկ էն աղջըկան՝  
Սիրած եարին թոռշ կըլնի:  
Հօ՛յ, Նա'զան իմ, եւալն:

Դարուն ա, ձուն ա արել.  
Վա՛յ, լե, լե, վա՛յ, լե, լե,  
Վա՛յ, լե, լե, լե, լե.

Իմ եարն ինձնից ա սառել։  
Ա՛յս, չունա՞յ, վա՛յս, ա՛յ եար,  
չար մարդու լեզուն։

Քամին փըշում ա պաղ պաղ։  
Լերդ ու թօքու անում ա գաղ։  
Եար, ինձ բէմուրադ արիր, —  
Սէրդդ ինձնէ զատ արիր։

## 33

Ես սարէն կու գայի,  
Դուն գուռը բացիր.  
Չեռդդ ծոյըդ տարար,  
Ախ արիր, լացիր։  
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վառուում եմ,  
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, հալուում եմ,  
Հալուում, վառուում եմ։

Ես մի պինդ պաղ էի,  
Դու մըրմուռ լացիր.  
Քո հրեղէն արցունքով  
Ինձի հալեցիր։  
Վա՛յ, վա՛յ, եւ այն։

Ես մի չոր ծառ էի,  
Դու գարնան արե.  
Քո սիրով ծաղկեցաւ  
Իմ ճիւղն ու տերեւ։  
Վա՛յ, վա՛յ, եւ այն։

Թէ ինձ չէիր առնի,  
Ինչու սիրեցիր.  
Մի բուռ կըսակ եղար,  
Սիրով էրեցիր։  
Վա՛յ, վա՛յ, եւ այն։

## 34

Հօ՛, եա՛ման ու եա՛ր զան,  
Զէ՛, եա՛ման ու մարջան։  
Ես օր նորը նորել է.  
Հօ՛, եա՛ման ու եա՛ր զան,  
Նորել է բոլորել է.  
Զէ՛, եա՛ման ու մարջան։  
Եար, քո լուսնակ երեսից  
Հօ՛, եա՛ման ու եա՛ր զան,  
Իմ սիրով մոլորել է։  
Զէ՛, եա՛ման ու մարջան։

Քան լուսինն ամպի տակով  
Դու ջուր կերթաս տորակով.  
Հոգիս քեզ մատաղ լինի,  
Սիրտըս կէրես կըրակով:

Զուրն իմ տան տակից բըխար,  
Էրուած սիրտըս լըւանար.  
Եար, քո տըւած խոցերը,  
Քո ձեռներով լաւանար:

35

Կապուտ քուռակ հեծել եմ,  
Արագին մօտեցել եմ.

Ա՛խ, ջա՞ն Արագ,  
Վա՞խ, ելմա՞ն Արագ:  
Արագ ինձ մի ճամբայ տուր, —  
Իմ եարին կարօտցել եմ:

Մի ճամբայ տուր,  
Երբամ եարիս իիւր:

Արագը չունի գեամին,  
Կըրծքիս ա տակի քամին.

Ես մի զարիբ ջան ունիմ,  
Զըհամնեմ Ոսկէծամին:

Արագ, Արագ, ջան Արագ,  
Բինդեօլից բըխան Արագ.  
Բնկել եմ ես քու ծոցը,  
Մի տար ման ի ման, Ա՛րագ:

Խոր գետը ծով դառել ա,  
Ինձ էլ հետը տարել ա.  
Խեղճ աղջիկն այնպէս դիտէ,  
Սէրս իրենից սառել ա:

Ա՛խ, Արագն է շատ վարար,  
Գուրս ելնելու չունիմ ճար.  
Եար, սոկի ծամբդ բաց թող,  
Քաշէ ինձի, քեզ մօտ տար:

Զա՞ն, ա՛ղբէր, զա՞ն, ա՛ղբէր,  
Զա՞ն, եա՞րօ, զա՞ն,  
Զա՞ն, եա՞րօ, զա՞ն, եա՞րօ,  
Զա՞ն, ա՛ղբէր, զա՞ն:

Սարերը ման եմ եկել,  
Դաշտերը բան եմ եկել.  
Ասին աղբէրդ եկել ա,  
Դըժի նըման եմ եկել:  
Զա՞ն, ա՛ղբէր, եւ այլն:

Գարունը նոր ա բացուել,  
Վարդը կոկոմ ա դարձել,  
Աղաչանքը չ'եր լըսում.  
Եմ սիրտը մամ ա դարձել:  
Զա՞ն, ա՛ղբէր, եւ այլն:

Եղինքը ծուռն ՚իր թողել,  
Օտարի գուռն ՚իր թողել,  
Ինձ էնպէս ՚իր մոռացել,  
Սարի էն կուռն ՚իր թողել:  
Զա՞ն, ա՛ղբէր, եւ այլն:

Գայի աշտեր, բլոնի լոր,  
Աղջիկ տեսայ եայլի ձոր,  
Նըման էր կազմիր խընձոր:  
Լո՛րիկ, զարնան հարե  
Գու վարդ արիր, լո՛րիկ:  
Նըման եր կարմիր խընձոր,  
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ,  
Լո՛րիկ, զարնան հարե  
Գու վարդ արիր, լորիկ:

Սըհ գիպաւ սարերուն,  
Կաքաւ թըռաւ քարերուն,  
Լորիկ կայնէ վեր գարուն:  
Զուր կու գայ գոչդոչալէն,  
Գրլիսուդ ևս գըցէ վալէն,  
Լուր, չես հարցնէ իմ հալէն:

Բար մի թալի մեր զըշին,  
Թող գայ նըստի քու թըշին,  
Կըրակ տու զարիր փըշին:

Հաւա՛ր Զուլօ, մադա՛ր Զուլօ,  
Քեզի տեսայ, վառայ, Զո՛ւլօ.  
Բացուի՛ր, բացուի՛ր, բացուի՛ր,  
բացուի՛ր, իմ վարդ Զուլօ:

Ես Ալէքն եմ Մաստաբեցի,  
Սիրուն, արի, մեր տուն կեցի,  
Դէմ աղօթրան եկեղեցի:

Հաւա՛ր Զուլօ, մադա՛ր Զուլօ,  
Բացուի՛ր, բացուի՛ր, բացուի՛ր,  
Բացուի՛ր իմ վարդ Զուլօ:

Արհն ելաւ կամար կամար,  
Զուլօն կապեց ոսկէ քամար,  
Ես կը մեռնիմ քեզի համար:

Արհն ընկաւ ամուր բերդին,  
Քո սէրն ընկաւ մէջ իմ լերդին,  
Ես քեզ սիրեմ, թող զիս քերթին:

Դու դաշտ կուգաս հուլա հուլա,  
Կու նըմանիս բամկի քուլա,  
Աչքըս տեսաւ, սիրտըս կուլայ:

Մեր ջուխտ դութան դաշտ կու  
բանի,

Զուլօ խաթուն հաց կու տանի,  
Աչքով, ունիքով մարդ կուսպանի:

Հելել-վելել, մըսրու դոմէշ,  
Իմ ձեռ թալեմ Քեալաշու փէշ,  
Զուլօն եղնի ինձի փեշքէշ:

Ամակել ա, ձուն չի դալի,  
Նողե՛ր ջան,  
Սարիցը տուն չի դալի,  
Նողե՛ր ջան,  
Դու տորուա', դուն օրօրա',  
Նողե՛ր ջան,  
Ամպի տակին ձուն կերեւայ,  
Նողե՛ր ջան.

Սիրտըս կըսակով լըցուած,  
Նողե՛ր ջան,  
Աչքերիս քուն չի դալի:  
Նողե՛ր ջան,  
Դու տորուա', դուն օրօրա',

Նողե՛ր ջան,  
Ամպի տակին ձուն կերեւայ,  
Նողե՛ր ջան:

Հուրք ա թափում վերիցը,  
Ես վառայ քո սէրիցը.  
Վարդավառին ինձ համար  
Չուն բեր դու սարերիցը:

Սարի գլխին ձուն եկաւ,  
Նողե՛ր ջան,  
Նէլլիկ եարըս տուն եկաւ  
Նողե՛ր ջան.  
Ուն կերեւայ, ձուն կերեւայ,  
Նողե՛ր ջան,  
Բերդի տակին տուն կերեւայ,  
Նողե՛ր ջան.

Դեռ մուրազիս չի հասած,  
Նողե՛ր ջան.

Վըրէս խորունկ քուն եկաւ:  
Նողե՛ր ջան.  
Ուն կերեւայ, ձուն կերեւայ,  
Նողե՛ր ջան,  
Բերդի տակին տուն կերեւայ,  
Նողե՛ր ջան:

Աշունն եկաւ սարիցը,  
Տերե թափեց ծառիցը.  
Նողօն դարդով լցուել ա, —  
Հեռացել ա եարիցը:

## 40

Սո'նա, եա՛ր, Սո'նա, եա՛ր,  
Սո'նա սիրուն. Սո'նա, եա՛ր:

Վարդավառը դալիս ա,  
Սո'նա, եա՛ր, Սո'նա, եա՛ր,  
Ծաղիկը ցընծալիս ա.  
Սո'նա սիրուն, Սո'նա, եա՛ր.  
Այ գիւղում կանչող աղջկի,  
Սո'նա, եա՛ր, Սո'նա, եա՛ր,  
Ծէնըդ ծլլվըլալիս ա:  
Սո'նա սիրուն, Սո'նա, եա՛ր:

Կանաչ տեղը՝ բաղում ես,  
Պարի միջին խաղում ես.  
Կաքաւի պէս սուրալով,  
Տըզաներին դաղում ես:

Կարմիր գինին թասումը,  
Ես եմ քո հաւասումը.  
Ե՞րբ կը տաքնան աղջլկերք, —  
Վարդավառի պասումը:  
  
— Հայ, ասի նա, ասի նա,  
Կարմիր գինին թասին ա.  
Տըղէք երբ կը կոտորուին, —  
Հորթաթողի պասին ա:  
  
— Սիրուն աղջիկ, նազ ունիս,  
Շահ զադայի սաղ ունիս.  
Հողեմ շահ զադի գըլուխ,  
Դու իմ հոգում հաղ ունիս:

Տրդայ. Հաբրբան:  
Աղջիկ. Զա'նէ, զա'ն:  
  
Տրդայ. Սիրել եմ սերն երեսին.  
Անթառամ թերն երեսին.  
Ով իմ սիրածն ինձ չի տայ,  
Աստըծու կերն երեսին:

Աղջիկ. Հաբրբան:  
Տրդայ. Զա'նէ, զա'ն:  
  
Աղջիկ. Սարի թըրթընջուկ թաղա,  
Մեղը ու շաքար քեզ մաղա.  
Ինձ պէս նաղանի աղջիկ,  
Քեզ պէս ալղին մնց սաղա:  
  
Տրդայ. Պը՛զտիկ աղջիկ, համ ունիս.  
Չորեքդիմաց ծամ ունիս.  
Խունջիկ-մունջիկ մի անի,  
Ինձ առնելու կամ ունիս:  
  
Աղջիկ. Գութանըդ հոլա, հոլա,  
Գութանիդ տակը քոլ ա.  
Քանի գըժութիւն անես,  
Քեզի առնողը տոլ ա:  
  
Տրդայ. Չեր տան տակին վար կանեմ,  
Չար ագուաւին քար կանեմ.  
Թող իմ սիրածն ինձի տան,  
Դըժութիւնը թարկ անեմ:  
  
Աղջիկ. Չուրը իր ճամբով կերթայ,  
Ցօղածը վարդի թերթ ա.

Խնձ սիրող կըտրիճ տըղէն,  
Հաղարի մէջ մի բերդ ա:

Տըղայ. Բուսել ես բաղի միջին,  
Շամամի թաղի միջին,  
Դիշեր, ցերեկ միալար,  
Դու ես իմ խաղի միջին:

Աղջիկ. Աշուղի պէս խաղ առա,  
Բըլբուլի պէս տաղ առա,  
Խնչքան որ գովես՝ արժեմ,  
Իմ մօր զովական փեսայ:

## 42

Նոր է բացուել բարի լուս,  
Մէկ տեղ կերթանք դար ի դուս:  
Բօրիկ մի՛ եկի, փուտ է,  
Ար' ըունիկ, պազդ անուտ է:

Էս ձորն ի վեր ձընեբակ,  
Դու նմանիս արեգակ:

Հավ կը վըշէ սարն ի վեր,  
Արտօւտ կենէ դարն ի վեր:

Ա՛ղջի, ահուշիկ նազեր,  
Խելքը տարաւ քու մազեր:  
Երկնից կամար ունքելըդ,  
Ինձի վառեց քու սէլըդ:  
Մատաղ լինեմ ու աչին,  
Ես կարօտ եմ քու պաշին:

## 43

Հօ՛լա, ա՛խ, տընաւե՛ր տուն:  
Քամի, մի տա մեր գըռան:  
Տօրօրիմ, իմ պըզմիկ գըրկանոց,—  
Դու քընի՝ մէջ քընուդ ես քըրդընի.  
Տի դամ՝ պադնիմ կարմիր երես:

Հօ՛լա, ա՛խ, տընաւե՛ր տուն:  
Քամի, մի տա մեր գըռան:  
Ասօր պարտէզ մ'եմ տեսե,  
Երկու շամամ էր ի նե,  
Սև օձն էր փաթըթե բոլոր:

Հօ՛լա, ա՛խ, տընաւե՛ր տուն:  
Քամի, մի տա մեր գըռան:

Սիրտո ի մըրմուռ, աչքերս ի լաց.  
Ասօր նըստիմ, էնդան տի լամ,  
Քարէ կարկուտ աչքերէս դայ:

Հօ՛յլա, ա՛խս, Տընաւե՛ր Տուն:  
Քամի, մի տա մեր գըռան:  
Իմ խոցերն է շատ.  
Վանայ ծով զըմէն գեղ ըլնի,  
Զիմ դառ վերքեր չի գեղի:

## 44

Կըռնւնկ, յմւստ կուգաս: — Բաղդատայ  
չոլէն:  
— Խաբրիկ մը չունիս իմ հօրէն, մօրէն:  
— Բու հէրն է մեռի, քու մէր շըւարի,  
Առի ուր ձէթկիկ ծագեր, ձուարի:

## 45

Ծովուն հաւքըմ կէր, անունն էր արօր,  
Վըզիկ երկէն էր, ոըրտիկ սկաւոր.

Կապեմ բեչարէս, երթամ հետ ինոր,  
Էն իմ դարդ դիտի, ես էլ դօ ինոր:

Եկաւ հաւքըմ էլ, թըզթիկ կէր բերան,  
Առի, կարգացի իմ գըլիսու ֆերման.  
Սիփի, եար, արի, լըռով մի կենայ  
Աստըւորի մալ ձի, քե չի մընայ:

## 46

Աղուէս գընաց, մըտաւ ջաղաց,  
Թաթեր վերուց մի բոլ խաղաց:  
Հարայ, ա՛ղուես, պարո՞ն աղուես,  
Աժսարինի մեջ չը կայ բու պէս:

Մի կոտ ու կէս կորեկ աղաց,  
Էն էլ շալակն առաւ գընաց:

Աղուէս կերաւ գեղի հաւեր,  
Փարուէղ տըւաւ վերի կալեր:

Աղուէս պառկե բըրչոտ կողին,  
Թաթեր դըրե սիպտակ հողին:

Աշունք բլունենք կուղ ու աղուէս,  
Ասի՞ կարգեմ իմ Օհանէս:

Ել դին չարտւ յէլ տարօւայ պէս,—  
Ազապ մընաց իմ Օհանէս:

47

Գնացէք, տեսէք՝ ովէ կերել այդին:—  
Գնացին, տեսան՝ այծն է կերել այդին:  
Այծն ու այգին,—  
Չեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ:

Գնացէք, տեսէք՝ ովէ կերել այծը:—  
Գնացին, տեսան՝ դայլն է կերել այծը:  
Դայլն ու այծը,  
Այծն ու այգին,—  
Չեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ:

Գնացէք, տեսէք՝ ովէ կերել դայլը:—  
Գնացին, տեսան՝ սուրն է կերել դայլը:  
Սուրն ու գայլը,  
Դայլն ու այծը,

Այծն ու այգին,—  
Չեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ:

Գնացէք, տեսէք՝ ովէ կերել սուրը:—  
Գնացին, տեսան՝ ժանդն է կերել սուրը:  
Ժանդն ու սուրը,  
Մուրն ու գայլը, եւ այն:

Գնացէք, տեսէք՝ ովէ կերել ժանդը:—  
Գնացին, տեսան՝ իւղն է կերել ժանդը:  
Իւղն ու ժանդը,  
Ժանդն ու սուրը, եւ այն:

Գնացէք, տեսէք՝ ովէ կերել իւղը:—  
Գնացին, տեսան՝ մուկն է կերել իւղը:  
Մուկն ու իւղը,  
Իւղն ու ժանդը, եւ այն:

Գնացէք, տեսէք՝ ովէ կերել մուկը:—  
Գնացին, տեսան՝ կատուն է կերել մուկը:  
Կատուն ու մուկը,  
Մուկն ու իւղը, եւ այն:

Գնացէք, տեսէք՝ ովէ անարել կատուն:—

Գնացին, տեսան՝ հարսն է տարել կա-  
տուն։  
Հարսն ու կատուն,  
Կատուն ու մուկը, եւ այլն։  
Գնացէք, տեսէք՝ ով է տարել հարսը։—  
Գնացին, տեսան՝ փեսան է տարել  
հարսը։  
Փեսան ու հարսը,  
Հարսն ու կատուն, եւ այլն։  
Գնացէք, տեսէք՝ ով է տարել փեսան։—  
Գնացին, տեսան՝ Աստուած է տարել փեսան։  
Աստուած ու փեսան,  
Փեսան ու հարսը,  
Հարսն ու կատուն, եւ այլն։

Ես Աղեկն եմ Զամբրեցի, մէջ ջիւան,  
Խանում Եւա ջան.  
Բըռնին տարան էստուց չուրի Երևան.  
Դուն կեցի՛ր բարով,  
Ես կերպամ լալով։

Լալով, ողբալով,  
Քոչ ու բարխանով,  
Սարեր ման գալով։  
Լալով, ողբալով,  
Քոչ ու բարխանով  
Սարեր ման գալով։  
Զեռ ու ոտը կապին բերդը գըրեցին,  
Զուխա, շալօւար լալով առնը բերեցին։  
Օրե՛ր, զարնան անո՛ւ օրեր,  
Ո՛չս, ո՞ւր իֆ կորեր.  
Օրե՛ր, զարնան անո՛ւ օրեր,  
Ո՛չս, ո՞ւր իֆ կորեր։  
Բերդիցը գուրս ելայ, Ալագեաղ տեսայ,  
Արարած աշխարհը գըրախտի պէս ա.  
Ապարան աչքերիս գուման ա դառել,—  
Իմ կեանքն ու արել եաման ա դառել։

Ոչխարն էսդին կարծայ՝ էնդին գառ-  
ները,  
Կանաչել են ծաղիկները ծառները,  
Արի, երթանկը քո ման գալած արտերը,  
Քեղի տեսայ, նորացան իմ գարդեր։

Ծորուա՛, Սա՛լար, տորուա՛,  
Նաւակին Արշակին կօրօրայ:

Արշակին եկաւ, ծովը դընաց,  
Խեղճ Սալաթին ցաւեր մընաց.  
Խաբար տարէք խեղճ Թամամին,  
Արշէի տուն աւեր մընաց:  
Ծորուա՛, Սա՛լար, տորուա՛,  
Նաւակին Արշակին կօրօրայ:

Քամին ելաւ երանե երան,  
Նաւը զարկաւ ծովի բերան.  
Խաբար տարէք իմ մայրիկին,  
Մեր տուն ու տեղ մընաց վերան:

Վերե նայեմ,—կապուտ ամպ ա,  
Ներքե նայեմ,—ջուր ու շամբ ա.  
Վերե Աստուած աղաչեցի,  
Ներքե չեղաւ ինձի ճամբայ:  
Երկինք ամպեց քամին առաւ,  
Ծովի երես չուրը սառաւ,

Թիակ զարկի, ինչ որ արի,  
Նաւը տեղէն ետ չը դառաւ:

Ես Արշակն եմ Գուլաբեցի,  
Գիշեր, ցերեկ ծովին կացի.  
Խաբար տարէք իմ Սալաթին,  
Հընար չեղաւ, նըստայ լացի:

Աստծուց եկաւ, էս ինչ բան ա,  
Ես էս ցաւին չեմ դիմանայ.  
Խաբար տարէք իմ Նիկոյին,  
Էս նեղ տեղից ինձի հանա:

Բուք ու գուման ա ձորերըս,  
Ու ա գառել իմ օրերըս.  
Ափսոս ինձ պէս կըտրիճ տըղէն,  
Բողչին մընաց իմ շորերըս:

Օրն էր ուրբաթ,  
Լուս ի շաբաթ,  
Գետշտ երիբենքը Մալաբետէն.

Թըղթիկ մանեկաւ Զըղիլու քաղքէն,  
Առին, բերին Մալաքեաւէն,  
Տուին ի ձեռ Մոկաց Միրզէն.  
Հազա՞ր ափսոս Մոկաց Միրզէն:

Առեց, կարդաց քաղցրիկ լեզուէն,  
Երաւ մաղպէն,  
Նըշեց աչքեր, կախեց չանէն,  
Քաղուաւ կարմիր երեսէն.  
Հազա՞ր ափսոս Մոկաց Միրզէն:

Կանչեց, ասաց իւր մըշակին,—  
Դուռ քաշի Բող-Բեգաւին,  
Վըրայ Գըրէք թամքը սաղավին,  
Սաֆար կերթամ չուր Զըղիրէն:  
Հազա՞ր ափսոս Մոկաց Միրզէն:

Գնաց, հասաւ չուր Զամբարէն,  
Խաթուններ թափան փանջարէն,  
Թափան Մոկաց Միրզի թամաշէն.  
Զըկէր իւր նըման բոլոր գունիէն:  
Հազա՞ր ափսոս Մոկաց Միրզէն:

Գընաց, հասաւ չուր Զըղիրէն,  
Եկան, ժողուան քաղաք զըմէն.  
Մոկաց Միրզէն  
Կարմէր քաղաք զըմէն:  
Հազա՞ր ափսոս Մոկաց Միրզէն:

Խէր չը տեսնէր կոլոտ փաշէն.  
Բաժն էր կոլոտ, բըրչամ երկէն.  
Կանչեց Մոկաց Միրզէն,  
Տարաւ յիւր օդէն:  
Բեմուրադ կեներ կոլոտ փատեն:

Առեց փարէն,  
Իջաւ շուկէն,  
Ետու, առեց մէկ բաշրլէն,  
Առեց, բերաւ, դանակ դեղեց մէկ  
երեսէն,

Կաժից՝ կաժ մ'ինք կերաւ,  
Մէկ ետու՝ Մոկաց Միրզէն:  
Բեմուրադ կեներ կոլոտ փատեն:

Հեծաւ զձին Մոկաց Միրզէն,  
Քամեց մաղպէն.

Ելրջաւ բալակ աչքեր, կախաւ լամէն,  
Թափաւ մըռուսէն,  
Թափաւ մազեր կարմիր երեսէն,  
Թափաւ բեղեր նազիկ պըռկէն,  
Թափաւ դեղին ջուր սիպտակ լեշէն:  
Բեմուրադ կենէր կոլոս փառեն:

Եկանք, հասանք չուր խընկու դարէն.  
Բարով հասանք չուր խընկու դարէն:  
Տեսանք ժուռ ժուռ նաշը ներքուց  
— բերեն:  
Հազա՞ր ափսոս Մոկաց Միրգեն,  
Բեմուրադ կենէր կոլոս փառեն:

Եկանք, հասանք չուր Բըռնաշէն.  
Բարով հասանք չուր Բըռնաշէն:  
Կուժն ու կըթխէն կապած նաշէն.  
Պուտ պուտ արիւն թափէր դետին:  
Հազա՞ր ափսոս Մոկաց Միրգեն,  
Բեմուրադ կենէր կոլոս փառեն:

Խաբար տարէք Մալաքեաւէն,  
Թող խաղայ հանաղէն,

Թող խաղայ ջանաղէն:  
Հազա՞ր ափսոս Մոկաց Միրգեն,  
Բեմուրադ կենէր կոլոս փառեն:

Խաբար տարէք Մալաքեաւէն,  
Խաբար տուէք բերդի խաթունին.  
Թող գայ վար իւր թախթէն.  
Հանէ թաղէն,  
Հագնէ զինէ,  
Ինչի բերդի խաթուն է էն:  
Հազա՞ր ափսոս Մոկաց Միրգեն,  
Բեմուրադ կենէր կոլոս փառեն:

Եկանք, հասանք Մալաքեաւէն.  
Եկանք, մըռանք Միջաթաղ.  
Մէն հանաղէն, մէկ ջանաղէն,  
Երկուս կը խաղան էն մէկ խաղ:  
Խաբար տարէք հերկան, մերկան,  
Թանգ Նազուխան  
Թող տան երկան:

Եկան, Ժողուան Մոկացիք,  
Եկան մօտ Մոկաց Միրգէն.

Տարան դըրին՝ մէջ պողերուն.  
Դուռն էլ բացին հարաւ քամուն:  
Կացէք բարով,  
Հազար տարով:  
Թանգ Նազուխան  
Թող տան երկան:

Ծանօթութիւն

Հազար ու մի խաղի այս առաջին լիս-  
նեակը կազմուած է ամբողջապէս ժողովը-  
դական երգերից, որոնք բալորն ունին իրենց  
յատուկ եղանակները և որոշուած են եր-  
գելու և ոչ թէ կարգալու համար: Տների  
իմաստի կապակցութեան թերին լրացնում  
են եղանակն ու կրկնակները:

Եեռի տակ ունեցած լինելով մօտ 25  
Հազար քառասողերի ժողովածու, ինչպէս  
և ուրիշ երգերի վարեանտներ, բաղդադել  
ենք նոյն երգերի վարեանտները և վերցրել  
մեր կարծիքով ընտեր համարուած ձեւերը:  
Եթէ թուրքերէն բառերի, տեղ հայերէնը  
դաել ենք, հայերէնն ենք պահած, բայց և  
այնպէս գեռ յաճախ մնում են թուրքերէն  
բառեր, մանաւանդ յանդերի մէջ:

Համար 2, 4, 5, 43, 44, 45, 46, 47 և  
50 երգերը ժողովրդէ մէջ արդէն ամբողջ  
են. գըանցից համար 5, 46 և 47, որքան գե-  
տենք, առաջին անդամ այստեղ են հրա-  
տարակուում:

Համար 33, 37, 38, 48 և 49 երգերը ժողովրդի մէջ անկատ աներով, կատան ի խուռան երգուում են այս կամ այն անձի, կամ զանազան համանման դէպքերի և այլն մատին։ Այսպիսի բազմաթիւ տներից առել ենք միայն ընտիրները և աշխատել ենք այնպէս գասաւորել, որ որոշ իմաստ արտայայտուի։

Մնացած 36 երգը մէր խմբագրութեամբ են կազմուած։ Ժողովուրդը սովորաբար մի տուն միայն երգում է որ և է եղանակով և տպա լրեն ծանօթ քառասողերից, առանց մարգն ու շաղըրութիւն դարձնելու, շարունակութեան մէջ երգում է անխմտիր այս կամ այն քառասողը։ Մենք աշխատել ենք յաջորդ տների ընտրութիւնն այնպէս անել, որ բոլորը միասնին, որքան կարելի է, մի ամբողջութիւն կազմեն և յարմար լինեն եղանակն և կրկնակների իմաստին։

Այս երգարանի գործածութեան ժամանակ պէտք է ի նկատի ունենալ.

- 1) Կրկնակները տպուած են շղատառերով և միայն առաջին տների մէջ. յաջորդ աների մէջ պէտք է համապատասխան տուղերից յետոյ երգուին նոյն կրկնակները;
- 2) Բացի մի քանի բառերից, լնչպէս

են՝ ես (զերանուն), եկ ևայլն, բառասկզբի ետառը, ըստ ժողովրդական արտասանութեան, պէտք է ի հնչել. նոյնպէս և բառասկզբի ու տառը սովորաբար արտասանուում է իբրեւ։ լնչպէս՝ սղորմի=օղորմի։

Ա. Եջմիածին. Ա. Պ. Ի. Մ. Ա. Ա.



Գրքունակը՝ միան թէ, (Յանձնողն) ու շնչառական մասին բանական տեսք ու շնչառ և անձնագիրը չ պահպան անունը անձնագիրը պահպան անունը և պահպան անունը անձնագիրը չ պահպան է անունը էջ.

## ՅԱՆԿԱ

1 Ալաղեազ Մարն ամպել ա (11)	15
2 Ախ կանեմ, արուն կու գայ (19)	23
3 Ախ, մարտ ջան, կոկոնըս թոսումած մընաց (25)	30
4 Աղուէս գընաց, մըսուտ ջաղաց (46)	53
5 Ամպելա, ձուն չի գալի, Աողե՛ր ջան. (39)	45
6 Անձրեն եկաւ շաղալէն (13)	17
7 Առնեմ, երթամ էն սարը (30)	35
8 Արազ հեշտացել ա (7)	11
9 Արև թըռվըռով ելաւ (15)	19
10 Գարուն ա, ձուն ա արել (32)	37
11 Գացի արտեր, բըռնի լոր (37)	43
12 Գնացէք, տեսէք ովէ կերել այդին (47)	54
13 Գութանը հաց եմ բերում (6)	10
14 Էար. այ, հեւա, հեւա, սիրտըս, (26)	31
15 Ես Աղեկն եմ Զամըրլեցի մէկ ջիւան (48)	56
16 Ես սարէն կու գայի (33)	48
17 Երկինքն ամպել է (10)	14
18 Էս զեշեր լուսը տեսայ (21)	25
19 Էս զիշեր, լուսնակ գիշեր (28)	33

Էջ.

20 Էս օր ուրբաթ է, աղաս է (3)	7
21 Լուսնակը սարի տակին (22)	26
22 Լուսնակն ա կայնել դարին (24)	28
23 Լուսնակն անուշ, հովն անուշ (4)	8
24 Ծովուն հաւքըմ կէր, անունն էր արօր (45) 52	
25 Կայնել ես, կանչում էլ չես. (16)	20
26 Կայնել ես վարդի հովին (29)	34
27 Կապուտ քուռակ հեծել եմ (35)	40
28 Կըռնէնկ, յուստ կու զաս (44)	52
29 Կուժն առայ, ելայ սարը (9)	13
30 Հաբըրքան, ջանէ, ջան, (41)	48
31 Հաւար, Զնւո, մարմթ, Զնւո, (38)	44
32 Հնդ արէք, սարէ՛ր ջան, հնդ արէք (1)	5
33 Հօ, եաման ու եար ջան (34)	39
34 Հօյ եար, աղիզ եար ջան, դնւուլ բաց (27)	32
35 Հօյլա, միս, տնաւելը տուն (43)	51
36 Հօյ, նազան իմ, նազան իմ (31)	36
37 Զի՞տ տու, քաշի, մյ եղը (5)	9
38 Մատնիքը մատովը չէր (18)	22
39 Մեր գըռանը խընկի ծառ (12)	16
40 Մոկաց Միլը (50)	59
41 Նոր է բացուել բարի լուս (42)	50
42 Շորորա, Սալաթ, շորորա (49)	58
43 Չինար ես, կեռանալ մի (8)	12

## էջ.

44	Պարտէղ ունեմ գըալստ ա (14)	.	18
45	Զան, աղբէր, ջմն, մղբէր, (36)	.	42
46	Սարերի վըրով գընաց (20)	.	23
47	Սար, սար, ես սարերի ծաղիկն եմ (17)	.	21
+48	Սիրնեն ջան, սիրուն ջան, (23)	.	27
+49	Սիրտըս նըման էր (2)	.	6
50	Սննա հար, Սննա հար (40),	.	47
	Ծանօթութիւն	.	65
	Ցանկ . (1)	.	68

## Վրիպակներ

Սխալ	երգ	եջ	Տող	ուղիղ
մընա	3	7	6, 10	մընայ
»	»	8	2, 6,	»
չե՛ր	36	42	12	չե՛ր
բըռնի	37	43	1	բըռնի
»	47	55	19	»
Շըշց	50	60	7	Շըշց
Մէն	»	63	14	Մէն

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քաղաք	Մուն.	Զ.մ.	Բն.	Տարբ.
Երևան	01,0	7	8	առջև
"	01,2	8	6	"
Գյուղ	01	21	32	գյուղ
Վաղահ	1	63	78	վաղահ
Գյ.	01	62	74	հանձն
Արտօն	1	00	00	սահման
ՀԱՅ	01	10	0	ՀԱՅ

ՀՀ Ազգային գրադարան



NL0538550

36 776